Կ-736[1]-17.03.2015,24.03.2015-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 2-րդ հոդվածում « դատական իշխանության» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև հաշտարարության» բառերը:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ ԲԱԺԻՆ 7.1-ով.

«ԲԱԺԻՆ 7.1

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 31.1 ՀԱՇՏԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Հոդված 227.1 Հաշտարարը *և հաշտարարությունը*

1. Հաշտարարն այն անձն է, ով որպես անկողմնակալ երրորդ անձ հաշտարարության վերաբերյալ համաձայնության հիման վրա իրականացնում է հաշտարարություն՝ կողմերի միջև ծագած վեճը հաշտությամբ լուծելու նպատակով: *Հաշտարարն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի իր գործունեությունը ծավալել ինչպես մշտապես գործող հաշտարարական հաստատությունում, այնպես էլ դրանից դուրս:*

2. Հաշտարարությունը կարող է իրականացվել ինչպես կոնկրետ վեճով (ad hoc ադ հոք), այնպես էլ մշտապես գործող հաշտարարական հաստատության շրջանակներում:

Հոդված 227.2 Հաշտարարության սկզբունքները և հաշտարարի վարքագծի ընդհանուր կանոնները

1. Հաշտարարության գործընթացը իրականացվում է՝ կամավորության, գաղտնիության, կողմերի հավասարության, հաշտարարի անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

2. *Հաշտարարը պարտավոր է* առաջնորդվել վարքագծի հետևյալ ընդհանուր կանոններով՝

1) բացահայտել ցանկացած շահ կամ հարաբերություն, որը *կարող* է բացասաբար անդրադառնալ հաշտարարի անկողմնակալության վրա.

2) ապահովել հավասար, հարգալից և անկողմնակալ վերաբերմունք վիճող կողմերի նկատմամբ.

3) հաշտարարությանը մասնակցող կողմերին *պարզաբանել* հաշտարարի դերն ու հաշտարարության գործընթացի բնույթը.

4) պահպանել հաշտարարության գաղտնիությունը.

5) *հաշտարարությունն իրականացնել հնարավոր սեղմ ժամկետներում,*

6) նպաստել հաշտարարության *նկատմամբ վստահության և հեղինակության ձևավորմանը:*

Հոդված 227.3 Հաշտարարի իրավունքները և պարտականությունները

1. Հաշտարարն իրավունք ունի՝

1) հաշտարարության ընթացքում հանդիպումներ կազմակերպել ինչպես հաշտարարության բոլոր կողմերի հետ միաժամանակ, այնպես էլ հաշտարարության յուրաքանչյուր կողմի հետ առանձին.

2) գովազդել իր հաշտարարական ծառայությունները.

3) ստանալ իր ծառայությունների դիմաց վճար, բացառությամբ սույն *օրենսգրքով* նախատեսված դեպքերի.

4) ազատորեն կիրառել օրենքով չարգելված հաշտարարության մեթոդներ:

2. Հաշտարարը պարտավոր է՝

1) մինչև հաշտարարության սկսելը հաշտարարության կողմերին *պարզաբանել* կողմերի իրավունքները և պարտականությունները.

2) հրաժարվել հաշտարարություն իրականացնելուց, եթե գտնում է, որ իր մասնակցությունը հաշտարարության գործընթացին կհանգեցնի հաշտարարության որևէ սկզբունքի խախտման.

3) պահպանել հաշտարարության սկզբունքները և վարքագծի կանոնները:

3. Հաշտարարն ունի օրենքով սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

Հոդված 227.4 Հաշտարարության ընթացքում ձեռք բերված կամ հայտնի դարձած փաստերն օգտագործելու սահմանափակումները

Հաշտարարության ընթացքում բացահայտած կամ արտահայտած տեղեկությունները գաղտնի են: Բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերի, հաշտարարը, կողմերը կամ հաշտարարությանը մասնակցած կամ մասնակցող յուրաքանչյուր անձ չի կարող կանչվել դատարան որպես վկա, մասնագետ կամ փորձագետ՝ ցուցմունք տալու հաշտարարության ընթացքում հայտնի դարձած փաստի կամ տեղեկության վերաբերյալ:

Հոդված 227.5 Մշտապես գործող հաշտարարական հաստատությունը

1. Մշտապես գործող հաշտարարական հաստատությունը իրավաբանական անձ է, որը մշտական հիմունքներով մատուցում է հաշտարարական ծառայություններ:

2. Հաշտարարական հաստատությունը պետք է ունենա հրապարակված հաշտարարության կանոններ և հաշտարարների *վարքագծի* կանոններ, որոնց տվյալ հաստատության բոլոր հաշտարարները պետք է հետևեն: Մշտապես գործող հաշտարարական հաստատության հրապարակած *վարքագծի* կանոնները պետք է համապատասխանեն սույն օրենսգրքով սահմանված *սկզբունքներին և* հաշտարարի *վարքագծի* ընդհանուր կանոններին:

3. Մշտապես գործող հաշտարարական հաստատությունը պետք է հրապարակի հաստատության ցանկում ընդգրկված հաշտարարների կենսագրությունը և մասնագիտացումը:

4. Մշտապես գործող հաշտարարական հաստատությունը գրանցվում է արտոնագրված հաշտարարների ռեեստրում:

Հոդված 227.6 Արտոնագրված հաշտարարը

Արտոնագրված հաշտարար է հանդիսանում 25 տարին լրացած գործունակ քաղաքացին, ով ստացել է բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի

բարձրագույն կրթություն, չունի դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործության համար, ստացել է արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագիր և սահմանված կարգով գրանցված է արտոնագրված հաշտարարների ռեեստրում:

Հոդված 227.7 Արտոնագրված հաշտարարի արտոնագրումը

1. Արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագիր ստանալու համար արտոնագրված հաշտարարի թեկնածուն անցնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից հաստատված որակավորման դասընթաց կամ ներկայացնում է օտարերկրյա պետությունում նմանատիպ դասընթաց անցած լինելու վկայագիր, որի համարժեքության հաստատումը իրականացվում է հաշտարարության որակավորման հանձնաժողովի կողմից:

2. Հաշտարարության որակավորման հանձնաժողովում ընդգրկվում են՝ ՀՀ արդարադատության նախարարության երկու, ՀՀ դատական իշխանության մեկ ներկայացուցիչներ, մեկ Հայաստանի Հանրապետության նախկին դատավոր, ում պաշտոնավարումը դադարեցվել է սեփական դիմումի հիման վրա (հրաժարական է տվել) կամ լրացել է նրա 65 տարին (պաշտոնավարման տարիքը), *մեկ հոգեբան, մեկ գիտական-իրավաբան, մեկ արտոնագրված հաշտարար:*

3. Որակավորման դասընթացի, հաշտարարության որակավորման հանձնաժողովի ձևավորման, գործունեության, *որակավորման վկայագիր տրամադրելու* կարգը *և ժամկետը* սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

4. Արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագրի համար դիմող անձը ներկայացնում է իր կենսագրական տվյալները և տալիս է համաձայնություն՝ օրենքով սահմանված կարգով իրեն առնչվող տվյալների իսկությունը ստուգելու վերաբերյալ:

5. Արտոնագրված հաշտարարի որակավորման դասընթաց անցած կամ օտարերկրյա պետությունում համապատասխան դասընթաց անցած անձանց Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը տրամադրում է արտոնագրված հաշտարարի *որակավորման* վկայագիր, եթե վերջիններս բավարարում են սույն *օրենսգրքի 227.6-րդ* հոդվածի պահանջներին: Արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագիր տալը կարող է մերժվել նաև, եթե արտոնագրված հաշտարարի

թեկնածուն հաշտարարության որակավորման հանձնաժողովին իր մասին ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ ներկայացրել է ոչ լիարժեք կենսագրական տվյալներ:

Հոդված* 227.*8 *Արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագրից զրկելը և որակավորման վկայագրի դադարելը*

1. Արտոնագրված հաշտարարը հաշտարարության որակավորման հանձնաժողովի որոշմամբ կարող է զրկվել հաշտարարի որակավորման վկայագրից, եթե նա թույլ է տվել հաշտարարի՝ օրենքով սահմանված պարտականությունների կոպիտ կամ պարբերական խախտումներ կամ, եթե պարզվել է, որ արտոնագիրը տրվել է օրենքի պահանջների խախտումով: Կոպիտ է հանդիսանում այն խախտումը, որը հեղինակազրկում է հաշտարարությունը կամ անհամատեղելի է հաշտարարի վարքագծի կանոնների հետ: Պարբերական է այն խախտումը, որն առանձին վերցրած, թեև կոպիտ խախտում չի համարվում, սակայն իր պարբերականությամբ հեղինակազրկում է հաշտարարությունը կամ անհամատեղելի է հաշտարարի վարքագծի կանոնների հետ:

2. Արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագիրը վաղաժամկետ դադարեցվում է հաշտարարության որակավորման հանձնաժողովի որոշմամբ, եթե արտոնագրված հաշտարարը.

1) դիմել է այդ մասին,

2) մահացել է,

3) ճանաչվել է անգործունակ,

4) դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար:

Հոդված 227.9 Արտոնագրված հաշտարարների ռեեստրը

1. Արտոնագրված հաշտարարների ռեեստրում ընդգրկվում են բոլոր այն անձինք, ովքեր ունեն արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագիր և բավարարում են արտոնագրված հաշտարարի՝ սույն օրենսգրքով սահմանված պահանջներին:

2. Արտոնագրված հաշտարարների ռեեստրը վարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ արդարադատության նախարարի կողմից սահմանված կարգով:

3. Արտոնագրված հաշտարարների ռեեստրը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքում, որում ներառվում է նաև արտոնագրված հաշտարարների կենսագրությունը, կապի միջոցները, մասնագիտացումը, ինչպես նաև տեղեկություններ, թե արդյոք հաշտարարը գործում է որպես անհատ հաշտարար, թե մշտապես գործող հաշտարարական հաստատության շրջանակներում:

Հոդված 227.*10* Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը

1. Սույն *օրենսգրքի* համաձայն՝ հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպություն է համարվում ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձը, որի անդամ են հանդիսանում *Հայաստանի Հանրապետության բոլոր* արտոնագրված հաշտարարները: Հայաստանի Հանրապետությունում գործում է մեկ հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպություն, *որը ստեղծվում է նվազագույնը 20 արտոնագրված հաշտարարների կողմից:*

2. Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության պետական գրանցումն իրականացնում է պետական ռեգիստրի կենտրոնական մարմինը: Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության պետական գրանցման համար բացի օրենքով սահմանված փաստաթղթերից ներկայացվում են նաև տեղեկություններ նրա անդամների մասին: Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության անվանումը պետք է ներառի «ինքնակարգավորվող կազմակերպություն» բառերը կամ «ԻԿԿ» հապավումը:

3. Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը պետական գրանցման պահից՝ 10-օրյա ժամկետում, պարտավոր է հաշվառվել դատական դեպարտամենտում՝ ներկայացնելով սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված փաստաթղթերի պատճենները: Սույն մասով նախատեսված փաստաթղթերով սահմանված տվյալների փոփոխության դեպքում հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունն այդ մասին անհապաղ հայտնում է դատական դեպարտամենտին:

4. Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության նպատակն իր անդամների գործունեության թափանցիկությանը և արդյունավետության

բարձրացմանը նպաստելն է, նրանց գործունեության վերահսկողությունը, հավաքական շահերի պաշտպանությունը, իր անդամների վարքագծի կանոնների մշակումն ու կիրառումը, ինչպես նաև սույն *օրենսգրքով* սահմանված լիազորությունների իրագործումը:

5. Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունն իրավունք ունի՝

1) քննել իր անդամների գործունեության հետ կապված՝ սույն *օրենսգրքով* սահմանված պահանջների խախտման վերաբերյալ դիմումները,

2) ընդունել կարգեր և կանոններ՝ իր անդամների որակավորումը, *վարքագծի* կանոնների կիրառումը, ինչպես նաև իր բնականոն գործունեությունն ապահովելու համար.

3) սահմանել հաշտարարական վճարների միջին գնացուցակը.

4) պարբերաբար կազմակերպել հաշտարարների վերապատրաստումը,

5) իրականացնել հաշտարարության ներդրման, զարգացման ուղղությամբ օրենքով չարգելված այլ գործառնություններ և գործունեություն:

Հոդված 227.11 Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության գույքը, կառավարման մարմինները

1. Անդամների (հիմնադիրների) կողմից հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությանը փոխանցվող գույքը հանդիսանում է նրա սեփականությունը: Անդամները պատասխանատվություն չեն կրում ինքնակարգավորվող կազմակերպության պարտավորությունների համար: Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար: Անդամները պարբերական վճարներ են կատարում անդամության համար, որի չափը որոշվում է հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության անդամների ընդհանուր ժողովը:

2. Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն է, որը կազմակերպության ղեկավարումն իրականացնում է տարեկան կամ արտահերթ ժողովների գումարման միջոցով: Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների երկու երրորդը: Ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերով՝

բոլոր անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով: Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

1) ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրության, կանոնների, կարգերի ընդունումը և դրանցում փոփոխությունների կատարումը.

2) արտոնագրված հաշտարարների վճարների միջին գնացուցակը հաստատելը.

3) ինքնակարգավորվող կազմակերպության անդամին անդամությունից զրկելը.

4) ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի, վերահսկիչ ծառայության անդամների և ղեկավարի, *վարքագծի* հանձնաժողովի ընտրությունը և նրանց լիազորությունների դադարեցումը.

5) ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հաստատումը.

6) ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ հարցեր.

7) ինքնակարգավորվող կազմակերպության անդամավճարի չափը սահմանելը,

8) գործադիր մարմին ընտրելը կամ նշանակելը,

9) Վարքագծի հանձնաժողովի թվաքանակի սահմանումը և անդամների ընտրությունը:

4. Գործադիր մարմնի ղեկավարը (անդամը) չի կարող միաժամանակ լինել *Վարքագծի* հանձնաժողովի անդամ:

3. *Վարքագծի* հանձնաժողովն ինքնակարգավորվող կազմակերպության կանոնադրությամբ, ինչպես նաև կանոններով կամ կարգերով սահմանված կարգով քննում է անդամների գործունեության համապատասխանությունը *սույն օրենսգրքի* և վարքագծի կանոններին:

Հոդված 227.12 Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության անդամի պատասխանատվությունը

1. Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է մեկամսյա ժամկետում քննարկել իր անդամի գործունեության վերաբերյալ ստացված բողոքը: Օրենքի և իրավական այլ ակտերի պահանջների կոպիտ խախտումներ հայտնաբերելու դեպքում հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության ընդհանուր ժողովը լուծում է տվյալ հաշտարարին կազմակերպության անդամությունից

ազատելու հարցը, որը պետք է լուծվի ոչ ուշ, քան խախտումը հայտնաբերելու կամ դրա մասին տեղեկանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

2. Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության անդամի հեռացման մասին որոշումը 5 օրվա ընթացքում ուղարկվում է արդարադատության նախարարության հաշտարարության որակավորման հանձնաժողովին և դատական դեպարտամենտ:

3. Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության անդամի հեռացման մասին որոշումը *հիմք է* հանդիսանում արդարադատության նախարարության հաշտարարության որակավորման հանձնաժողովի կողմից հաշտարարին՝ որակավորման վկայագրից զրկելու համար:»:

Հոդված 3 Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երեք ամիս հետո, բացառությամբ Օրենքի 1-ին հոդվածով լրացվող 227.6-րդ, 227.7-րդ և *227.9-րդ* հոդվածների:

2. Օրենքի 1-ին հոդվածով լրացվող 227.6-րդ, 227.7-րդ *227.9-րդ* հոդվածներն ուժի մեջ են մտնում Օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 4 Անցումային դրույթներ

1. Հաշտարարության որակավորման հանձնաժողովը ձևավորվում է Օրենքի 1-ին հոդվածով լրացվող 227.7-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում: *Մինչև արտոնագրված հաշտարարների որակավորման վկայագիր տալը հաշտարարության որակավորման հանձնաժողովի կազմում արտոնագրված հաշտարարի փոխարեն ընդգրկվում է հաշտարարության ոլորտում գիտական փորձ ունեցող անձ:*

2. Մինչև հաշտարարների առաջին ինքնակարգավորվող կազմակերպության գրանցումը, Օրենքի 1-ին հոդվածով լրացվող *227.10-րդ, 227.11-րդ, 227.12-րդ* հոդվածներով հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության իրավազորությունն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության հաշտարարության որակավորման հանձնաժողովը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**
1	2	3	4
ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Ռուզաննա Մուրադյան	1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ ԴՕ նախագիծ) 135.2-րդ հոդվածի 2-րդ մասում	«հետևի» բառից առաջ «խստորեն» բառը հանել:	Ընդունվել է մասնակի. ԴՕ նախագծի 135.2-րդ հոդվածի 2-րդ մասը հանվել է:
	2. ԴՕ նախագծի 135. 2-րդ հոդվածում	«Հաշտարարության սկզբունքերը և հաշտարարի վարքագծի ընդհանուր	Հոդվածը վերախմբագրվել է

		կանոններ» վերնագրով, ընդհանուր նշված են վարքագծի կանոններ, սակայն դրանք ավելի շատ գործառույթներ են: Առաջարկում եմ վերանայել և խմբագրել դրանք: Օրինակ 3-րդ կետի «բացատրել» բառը գործառույթ է, դարձնել այդ վարքագծի կանոն՝ փոխարինելով այն «օբյեկտիվորեն ներկայացնել» արտահայտությամբ:	
	3. ԴՕ նախագծի 135.2-րդ հոդվածի 6-րդ կետում	«սեղմ ժամկետում» արտահայտությունը փոխարինել «իրատեսական» կամ «ողջամտության ժամկետով» բառերով կամ նշել կոնկրետ թվերով:	Հոդվածը վերախմբագրվել է
	4. ԴՕ նախագծի 135.3-րդ հոդվածիի 2-րդ մասի 3-րդ կետը	վերանայել և խմբագրել՝ խուսափելով ժխտողական «չ» մասնիկից, քանի որ սպառնալիք հնչող ձևակերպումները օրենքի տարր չեն:	Ընդունվել է. ԴՕ նախագծի 135.3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը հանվել է: Միևնույն ժամանակ գաղտնիության վերաբերյալ պայմանը տեղափոխվել է՝ ԴՕ նախագծի 135.4-րդ հոդված:
	5. ԴՕ նախագծի 135.6-րդ հոդված	վերջին նախադասությունը խմբագրել՝ վերջում ավելացնելով «ինչպես նաև համապատասխան դասընթացի մասնակցած և	Չի ընդունվել. հոդվածի ձևակերպումից արդեն իսկ ակնհայտ է, որ արտոնագրված հաշտարար լինելու համար անձը պետք է ոչ միայն բյետիվ պահանջների բավարարի,

		որակավորում ստացած իրավական համակարգի աշխատակիցներ» մասը:	այլև լինի համապատասխան որակավորման դասընթաց անցած:
ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Սահակյան	1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ ՔԴՕ նախագիծ) 7-րդ հոդվածով լրացվող 149.11-րդ հոդվածի 3-րդ մասում	«գործի քննությունը շարունակվում է ընդհատման պահից» բառերը փոխարինել «դատարանը շարունակում է գործի քննությունը ընդհատման պահից» բառերով, ինչպես՝ 149.13-րդ հոդվածի 4-րդ մասում ևս:	Ընդունվել է. ԴՕ նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
	2. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149.13-րդ հոդվածի 2-րդ մասում	«կողմերից յուրաքանչյուրի» բառերը փոխարինել «կողմերից առնվազն մեկի» բառերով, քանի որ դա բխում է նույն հոդվածի 1-ին մասի պահանջից:	Ընդունվել է. ԴՕ նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
	3. ՔԴՕ նախագիծ	ՔԴՕ նախագծով կարգավորված չէ կողմերի կամ հաշտարարի նախաձեռնությամբ հաշտարարության գործընթացն ավարտելու դեպքում՝ նոր հաշտարար նշանակելու և	Չի ընդունվել. կողմերի կամ հաշտարարի նախաձեռնությամբ հաշտարարության գործընթացն ավարտելու դեպքում նոր հաշտարար նշանակելու և հաշտարարության գործընթացը վերսկսելու կարգի նկատմամբ (եթե կողմերը դեռ

		հաշտարարության գործընթացը վերսկսելու կարգը, եթե կողմերը դեռ ցանկություն ունեն հաշտարարության միջոցով հաշտության համաձայնություն կնքելու:	ցանկություն ունեն հաշտարարության միջոցով հաշտության համաձայնություն կնքելու) կիրառելի են Նախագծով առաջարկվող նույն ընդհանուր կանոնները:
	4. ՔԴՕ նախագծի 5-րդ հոդվածը	համարակալել 2 մասերով (1-ին մասը բացակայում է), 7-րդ հոդվածով լրացվող 149.13-րդ հոդվածի 5-րդ մասը «ոչ» բառից հետո լրացնել «, քան» բառերով, 149.14-րդ հոդվածի 3-րդ մասը «նիստ» բառից հետո լրացնել «և» բառով:	Ընդունվել է. ԴՕ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	5. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ ԴՕ նախագիծ) 1-ին մասով լրացվող 135.9-րդ հոդվածի 1-ին մասից	պարզ է դառնում, որ հնարավոր են դեպքեր, երբ հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության ընդհանուր ժողովը լուծի հաշտարարին կազմակերպության անդամությունից ազատելու հարցը, սակայն հաշտարարության որակավորման հանձնաժողովը հաշտարարին չզրկի որակավորման վկայականից, քանի որ	Ընդունվել է. ԴՕ նախագծով հստակ նախատեսվել է, որ արտոնագրված հաշտարարի ինքնակարգավորվող կազմակերպության անդամությունից զրկելու մասին որոշումը հիմք է արդարադատության նախարարության որակավորման հանձնաժողովի համար հաշտարարին որակավորման վկայականից զրկելու համար:

		որակավորման վկայականից զրկելու՝ հանձնաժողովի իրավասությունը հայեցողական է: Արդյունքում, անձը կարող է մնալ արտոնագրված հաշտարար՝ առանց նշված կազմակերպությանն անդամակցելու, մինչդեռ 135.9-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ բոլոր արտոնագրված հաշտարարները պետք է լինեն նշված կազմակերպության անդամ:	
	6. ԴՕ նախագիծ	ԴՕ նախագծում ամրագրել դրույթ, ըստ որի՝ հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը սահմանում է հաշտարարական վճարների միջին գնացուցակ, ինչպես դա սահմանվում է փաստաբանական գործնեության համար:	Ընդունվել է. ԴՕ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	7. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.9-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում, 135.10-րդ հոդվածի 3-րդ մասում	համապատասխանաբար՝ «սույն օրենքով», «սույն օրենքի» բառերը փոխարինել «սույն օրենսգրքով», «սույն օրենսգրքի» բառերով:	Ընդունվել է. ԴՕ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	8. ՀՀ դատական	կատարել համապատասխան	Ընդունվել է. ԴՕ նախագծում կատարվել են

	օրենսգրքի 2-րդ հոդվածում՝	փոփոխություն՝ կարգավորման առարկայում արտացոլելով նաև հաշտարարության կազմակերպման ու գործնեության հետ կապված հարաբերությունները:	համապատասխան փոփոխություններ:
	9. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող լրացումը	կատարել ոչ թե 3-րդ բաժնում և այն զետեղել միմյանց տրամաբանորեն հաջորդող երկու՝ 15-րդ և 16-րդ գլուխների միջև, այլև այն ամրագրել 3-րդ մասում՝ առանձին բաժնով և գլխով:	Ընդունվել է. ԴՕ նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	10. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.8-րդ հոդվածի 2-րդ մասում	նշված են որակավորման վկայագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերը, սակայն թվարկված հիմքերից մահվան, անգործունակ ճանաչման, դիտավորությամբ կատարված հանցագործության համար դատապարտման դեպքերում վկայագրի գործողությունն ըստ էության դադարում է: Ուստի առաջարկվում է շարադրել համապատասխան խմբագրությամբ: Միաժամանակ, անհրաժեշտ է սահմանել նաև վկայագրի կասեցման հիմքերը և կարգը:	Չի ընդունվել. հիմք ընդունելով Հաշտարարի ինստիտուտի առանձնահատկությունները առկա կարգավորումը նախատեսում է միայն արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագրից զրկումև դադարում, այսինքն անձը կամ իրականացնում է հաշտարարություն կամ չի իրականացնում հաշտարարություն (միջանկյալ տարբերակ առկա չէ):

ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Մարգարյան	1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 13-րդ հոդվածի 6-րդ մասում (Մասի նոր համարը 5-րդ մաս, տե՛ս Ծանոթություն 1-ը)	«պահից» բառից հետո ավելացնել «մինչև» բառը:	Ընդունվել է.հոդվածի մասը խմբագրվել է, հստակեցվել են ժամկետները:
	2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 6-րդ հոդվածի	2-րդ նախադասության մեջ «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո ավելացնել «փաստաբաններին,» բառը, իսկ «դատավորներին» բառից հետո դնել «,» և ավելացնել «դատախազներին և քննիչներին» բառերը:	Չի ընդունվել. հաշտարարության զարգացման ներկա փուլում հրաժարվել ենք անգամ նախկին դատավորին արտոնագրված հաշտարարի որակավորում տամադրելու պարզեցված կարգից (վերջինս ընդհանուր հիմունքներով անցնում է որակավորման դասընթաց), այնպես որ ՀՀ փաստաբաններին, ինչպես նաև նախկին քննիչներին և դատախազներին պարզեցված կարգով հաշտարարի արտոնագիր տալն արդեն իսկ նպատակահարմարությունը կորցնում է:

ՀՀ կառավարություն	1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ ՔԴՕ նախագիծ) 7-րդ հոդվածով լրացվող 149.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության մեջ	հստակեցնել, թե միջնորդություն ներկայացնող կողմը ո՞ր դատարանին է միջնորդություն ներկայացնելու:	Ընդունվել է. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության մեջ ավելավել է՝ «իր բնակության վայրի» դատարան բառերը
	2. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149.11-րդ հոդվածում	անհրաժեշտ է հստակեցնել, որ անգամ, երբ դատարանն է նշանակում հաշտարարություն՝ հաշտարարի ընտրության նախապատվությունը թողնվում է կողմերի հայեցողության վրա: Միայն այն դեպքում, երբ կողմերը չեն կարողանում համապատասխան հաշտարար ընտրել՝ հաշտարարին նշանակում է դատարանը:	Ընդունվել է. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդված հոդվածով լրացվող 149.11-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվել է նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Դատարանը նշանակում է կողմերի կողմից ընտրված արտոնագրված հաշտարարին, իսկ այն դեպքում, երբ կողմերը չեն ընտրում արտոնագրված հաշտարար, դատարանը արտոնագրված հաշտարար է նշանակում սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով:»

	3. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149.11-րդ հոդվածի 3-րդ մասում 4. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 11-րդ հոդվածի 4-րդ մասի	անհրաժեշտ է նաև հստակեցնել, որ դատարանի կողմից հաշտարարության գործընթաց նշանակվելու դեպքում՝ որոշման մեջ պետք է նշվի նաև հաշտարարի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: 2-րդ նախադասությունը, մասնավորապես սահմանում է հետևյալը. «Դատարանի որոշման հիման վրա արտոնագրված հաշտարարն ընտրվում է համապատասխան ոլորտի հաշտարարների ցանկից ըստ ազգանվան այբբենական հերթականության՝ արտոնագրված հաշտարարի ծանրաբեռնվածության աստիճանին համապատասխան:»: Մինչդեռ հաշտարարի նշանակելիս, բացի հաշտարարի ծանրաբեռնվածության աստիճանը հաշվի առնելը, պետք է հաշվի առնել նաև հաշտարարի՝ համապատասխան ոլորտում ունեցած մասնագիտացվածությունը:	Ընդունվել է. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149.11-րդ հոդվածի 3-րդ մասում դատարանի որոշման մեջ նշվող տեղեկատվությանը լրացվել է նաև՝ «արտոնագրված հաշտարարի անունը, ազգանունը և այլ անհրաժեշտ տվյալները» բառերով: Ընդունվել է. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 11-րդհոդվածի 4-րդ մասը խմբագրվել է, որպեսզի պարզ լինի, որ նշված մասը նախ կիրառելի է միայն հաշտարար նշանակվելու դեպքերում, այնուհետև՝ հաշտարար նշանակելիս հաշվի է առնվում նաև հաշտարարի մասնագիտացվածությունը:

	5. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 13-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին ու 2-րդ պարբերություններն	ըստ էության որոշակիորեն նույնական են: Անհրաժեշտ է երկու պարբերությունները խմբագրել՝ ստանալով նոր պարբերություն: Միևնույն ժամանակ ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 13-րդհոդվածում տեղ են գտել առանձին դրույթներ, որոնք նպատակահարմար է համակարգել առանձին հոդվածում, քանի որ վերջիններս առնչություն չունեն ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 13-րդհոդվածի վերնագրի հետ (Հաշտարարության ավարտը), այլ վերաբերում են՝ արտադատարանական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վարույթին:	Ընդունվել է. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 13-րդհոդվածի 5-րդ մասի 1-ին պարբերությունը հանվել է, իսկ 2-րդ պարբերությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Ստանալով հաշտարարի պատշաճ ծանուցումը վեճը հաշտարարությամբ լուծելու մասին, սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ երեսուն օրվա ընթացքում դատարանը սույն օրենսգրքի 33-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հաստատում կամ մերժում է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը, կամ կարճում է գործի վարույթը՝ ապահովելով հաշտարարության գաղտնիությունը:»: Միևնույն ժամանակ ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 13-րդհոդվածի 6-10-րդ մասերը ներառվել են առանձին հոդվածում՝ «Արտադատարանական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վարույթ» վերնագրով:[1]

[1]Ծանոթություն1. ՔանիորՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149.13-րդհոդվածի 6-10-րդ մասերը ներառվել են առանձին հոդվածի տակ (Հոդվածի հերթական համարը՝ 149.14), այս պահից սկսված ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող հոդվածների հերթական համարները ևս փոփոխվել են:

	6. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 14-րդ հոդվածում (Հոդվածի նոր համար՝ 149.15, տե՛ս Ծանոթություն 1-ը)	անհրաժեշտ է հստակեցնել նաև հաշտարարության ծախսերի հատուցման կարգը այն դեպքերում, երբ հաշտարարության ծախսերը չեն հատուցվել մինչև դատարանին դիմում կամ ծանուցում ներկայացնելը:	Ընդունվել է. ՔԴՕ նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 149. 14-րդհոդվածում(Հոդվածի նոր համար՝ 149.15, տե՛ս Ծանոթություն 1-ը) լրացվել է նոր՝ 4-րդ մաս: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը ստացել է հերթական համար՝ 3-րդ մաս:
	7. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.1-րդ հոդվածում	նպատակահարմար է սահմանել ինչպես կոնկրետ գործով հաշտարարության իրականացումը (ad hoc), այնպես էլ մշտական հիմունքներով հաշտարարություն-ները:	Ընդունվել է. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.1-րդ հոդվածի վերագիրը ձևակերպվել է՝ «Հաշտարարը և հաշտարարությունը»: Լրացվել է 2-րդ մաս, իսկ 1-ին մասը լրացվել է նոր նախադասությամբ: Միևնույն ժամանակ, կրկնությունից խուսափելու համար ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.5-րդ հոդվածի 1-ին մասը ևս հանվել է:
	8. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.5-րդ հոդվածի 2-րդ մասում	քանի որ Նախագծերում օգտագործվում է բացառապես «հաշտարարի վարքագիծ» տերմինը, ուստի այստեղ ևս պետք է օգտագործվի այս տերմինը՝ «հաշտարարի էթիկա» տերմինի փոխարեն:	Ընդունվել է. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.5-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	9. ԴՕ նախագծում	անհրաժեշտ է հստակեցնել դատավորի կողմից արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագիր ստանալու գործընթացը: Մասնավորապես առաջարկում է դատավորի համար ևս սահմանել որակավորման դասընթաց՝ ընդհանուր կարգով:	Ընդունվել է. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.6-րդ հոդվածից հանվել է 2-րդ նախադասությունը, ինչպես նաև ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.7-րդ հոդվածի 2-րդ մասը:[2]
	10. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդ հոդվածի 3-րդ մասում (նոր խմբագրությամբ՝ 2-րդ մաս, տե՛ս Ծանոթություն 2-ը)	«հոգեբան-փորձագետ» արտահայտությունը առաջարկվում է փոխարինել «հոգեբան» բառով, քանի որ այս ձևակերպումն առավել հստակ է: Միևնույն ժամանակ, առաջարկվում է նաև հանձնաժողովի կազմն ընդլայնել՝ այդտեղ ներառելով նաև մեկ գիտնական-իրավաբան և մեկ արտոնագրված հաշտարար:	Ընդունվել է. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդհոդվածի 3-րդմասում (նոր խմբագրությամբ՝ 2-րդ մաս, տե՛ս Ծանոթություն 2-ը) ավելացվել է որակավորման հանձնաժողովի կազմը՝ մեկ գիտնական-իրավաբանով և մեկ արտոնագրված հաշտարարով, իսկ հոգեբան-փորձագետ հասկացությունը փոխվել է 1 հոգեբանով հասկացությամբ:
	11. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերությունը	առաջարկվում է առանձին մասի տեսքով տեղափոխել ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդհոդվածի 5-րդ մաս (նոր խմբագրությամբ՝ 4-րդ մաս, տե՛ս Ծանոթություն 2-ը):	Ընդունվել է. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդհոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերությունը դարձել է ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդհոդվածի 5-րդ մաս (նոր խմբագրությամբ՝ 4-րդ մաս, տե՛ս Ծանոթություն 2-ը):

[2]Ծանոթություն 2. ՔանիորԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135"7-րդ հոդվածի2-րդ մասը հանվել է, հոդվածի համարակալումը փոփոխվել է:

		Միևնույն ժամանակ ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդհոդվածի 7-րդմասը առաջարկվում է տեղափոխել որպես ԴՕնախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդհոդվածի 5-րդ մասի շարունակություն:	Միևնույն ժամանակ ԴՕնախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդհոդվածի 7-րդմասը տեղափոխել է որպես ԴՕնախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդհոդվածի 5-րդ մասի շարունակություն:
	12. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդ հոդվածում	տեղ են գտել առանձին դրույթներ, որոնք նպատակահարմար է համակարգել առանձին հոդվածում, քանի որ վերջիններս առնչություն չունեն ԴՕնախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդ հոդվածի վերնագրի հետ (Արտոնագրված հաշտարարի արտոնագրումը), այլ վերաբերում են՝ արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագրից զրկելուն և որակավորման վկայագրի դադարելուն:	Ընդունվել է. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 7-րդհոդվածի 8-րդ մասը ներառվել է առանձին հոդվածում՝ «Արտոնագրված հաշտարարի որակավորման վկայագրից զրկելը և որակավորման վկայագրի դադարելը»: միևնույն ժամանակ սույն հոդվածը լրացվել է նոր՝ 2-րդ մասով:[3]
	13. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 9-րդ հոդվածում (նոր խմբագրութ-յամբ համարը՝ 135. 10 տե՛ս	անհրաժեշտ է հստակեցնել մասնավորապես այն հիմնահարցը, թե առնվազն քանի արտոնագրված հաշտարարի կողմից պետք է	Ընդունվել է. ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135. 9-րդհոդվածի (նոր խմբագրությամբ համարը՝ 135. 10, տե՛ս Ծանոթություն 3) 1-ին մասում սահմանվել է,

[3]Ծանոթություն 3. ՔանիորԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող 135.7-րդհոդվածի8-րդ մասը ներառվել են առանձին հոդվածի տակ (Հոդվածի հերթական համարը՝ 135. 8), այս պահից սկսված ԴՕ նախագծի 1-ին հոդվածով լրացվող հոդվածների հերթական համարները ևս փոփոխվել են:

	Ծանոթություն 3) 14. ԴՕ նախագծի անցումային դրույթներ	ձևավորվի Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակեր-պությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշտարարության որակավորման հանձնաժողովը սկզբնական շրջանում օբյեկտիվորեն չի կարող ունենալ իր կազմում 1 արտոնագրված հաշտարար, ուստի անհրաժեշտ է ԴՕ նախագծի անցումային դրույթներում հստակեցնել, թե ով է վերջինիս փոխարինելու: Միևնույն ժամանակ, քանի որ ԴՕ նախագծի հոդվածների համարակալումը որոշ տեղեր փոփոխության է ենթարկվել, ուստի անհրաժեշտ է թե՛ «անցումային դրույթներ», թե՛ «օրենքի ուժի մեջ մտնելը» վերտառությամբ հոդվածներում տեղ գտած հոդվածների համարները համապատասխանեցնել նոր խմբագրությամբ ԴՕ նախագծի հոդվածների համարներին:	որ Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպությունը ստեղծվում է նվազագույնը 20 արտոնագրված հաշտարարների կողմից: Ընդունվել է. ԴՕ նախագծի անցումնային դրույթներում կատարվել է համապատասխան լրացում: ԴՕ նախագծի 2-րդ և 3-րդ մասերի հոդվածների համարները համապատասխանեցվել են ԴՕ նախագծի նոր խմբագրությամբ հոդվածների համարներին: